




66 րդ ՀՐԱՄԱՆԱԿԱՆԻՒՆ

ԿՈՄՄ ՀԵԻ ԹՈԼՄԹՈՅ




ՄԱՐԴԻԿԱ

ԻՆՉՈ ՈՎ

ԿՌՊՐԻՆ

ՃՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ



APRILS

1938

H. Burat

1938

Printed in Egypt

891.71  
5-80

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Հրատարակիչ, ՀԱՅԿ Ս. ԲԻՒՐԱՏ

66 ՀՐ ՀՐԱԾԱՐԱԿՈՒԹԻՒՆ

25 NOV 2010

ԿՈՄՄ ԼԵՒ ԹՈԼ ՍԹՈՅ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱՆՔ

ՄԱՐԴԻԿ ԻՆՉՈՎ Կ'ԱՊՐԻՆ

Թ.Ա.ԲԳԴ. Ե. Ք.

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՅԱ.ՏՈՒԿ

ՏՊԱԳՐ. ՀԱՅԿ Ս. ԲԻՒՐԱՏ

H. Burat

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. 1938

Printed in Egypt

23 SEP 2013

14/67

## ՄԱՐԴԻԿ ԻՆՉՈՎ Կ'ԱՊՐԻՆ

Ա.

Տունէ և հողէ զուրկ հնակարկատ մը կար որ զաւակներուն հետ՝ զիւղական խրճիթի մը փոքր սենակին մէջ կը բնակէր և ապրուստը կը ճարէր կօշիկներ շինելով։ Հացը սուղ էր, աշխատութիւնն ալ աժան, որով ստիպուած էր ամբողջ վաստակը ուստեղէնի ծախսել։

Կօչկակարը և կինը միայն մէկ հատ մուշտակէ վերաբերու ունէին, ան ալ հին. երկու տարիէ ի վեր մարդը կը խորհէր նոր վերաբերու մը շինելու համար ոչխարի մորթ գնել։

Զմրան մօտ, կօչկակարը երեք րուպլիի գումար մը ինայած և ի պահ դրած էր կնոջը սնտուկին մէջ. ասկէ զատ, գիւղացիները 5 րուպլիի և 20 կոպէկի չափ գումար մը կը պարտէին իրեն։

Զմեռ առաւօտ մը, մարդը որոշեց գիւղ իշնալ, նոր վերաբերուն գնելու համար։ Շապիկին վրայէն հագաւ կնոջը չինական, դեղին կտաւով շինուած պարեգուը, վրայէն ալ իր լաթէ վերաբերուն. գրպանը խոթեց երեք րուպլիի թղթագրամը, և նախաճաշը Ենելէ վերջ՝ գաւազանը առաւ գուրս ելաւ։

«Հինգ րուպլի գիւղացիներէն պիտի առնեմ, կը մտածէր ինքնիրեն, երեք րուպլի ալ գրպանս կայ, Այս գումարով, ոչխարի մորթէ վերաբերու մը կարելի է գնել»։

Կօչկակարը գիւղ հասաւ և գիւղացիներէն մէկուն խրճիթը մտաւ, Մարդը գուրս ելած էր, թէև կինը



23678 - 59

մերժեց նոյն պահուն զրամ տալ, սակայն, խոստաշցաւ շաբաթ պարտքը զրկել ամուսնոյն միջոցաւ: Ուստի գիւղացիի մը դիմեց, ան ալ երդումով ըստ, թէ զրամ չունէր և համեց քսան կոպէկ վճարեց, կօշիկներու նորոգութեան համար: Կօշկակարը փորձեց վարկով ոչխարի մորթ ձեռք ձգել, սակայն վաճառականը մերժեց: «Դրամը բե՛ր» ըստ վաճառականը «և վերջը ուղածդ ընտրէ, ապառիկ բան ծաւխելուն համը առած եմ»:

Այսպէս հակառակ կրած նեղութիւններուն, կօշչիկներու նորոգութեան համար ստացած քսան կուպէկէն զատ ոչինչ ձեռք ձգեց, ու յուսահատութենէ մղեալ այդ քսան կոպէկը օղիի տալէ վերջ դէպի տուն ճամբայ ելաւ:

Առաւօտուն շատ մսած էր, սակայն հիմա, առանց ոչխարէ վերարկուի, օղին խմելէ վերջ ինքզինքը տաք կը զգար: Գաւազանը սառած գետնին զարսնելով կը յառաջանար ու ինքնիրեն կը մրմիջէր: —

«Ոռանց վերարկուի ինքզինքս տաք կը զգամ: Քիչիկ մը օղի ճնկեցի ու ան ներսս շրջան կ'ընէ կոր: Վերարկուի պէտք չունիմ: շատ աղէկ եմ՝ և բոլոր ցաւերս ալ մոռցած: Անա աս տեսակ մարդ մըն եմ ես, վերարկուն ի՞նչ պիտի ընեմ: ամբողջ կեանքիս մէջ վերարկուի ևն. ի պէտք չունիմ: Միայն թէ մեր կինը քէն պիտի ընէ հետո: ըրածը պարզապէս ամօթ է, իրեն համար աշխատիմ, ան ալ հետո այս կերպով վարուի: Լա՛ւ, քիչ մը սպասէ: Աստուած վկայ քեզի կը սորվեցնեմ եթէ ստակը չի բերես: Քսան կոպէկը ձեռքիս մէջ դնելով կը կարծես թէ զիս կրնա՞ս խաբել: Քսան կոպէկով ի՞նչ կրնայի ընել խմելէ զատո: Լաւ եթէ դուն ստակ չունիս իմ ստա՞կս ուրկէ է, դուն արջառ, տուն, ամէն ի՞նչ ունիս: Ես ոչի՞նչ ունիմ: Քու

հացդ դուն կը պատրաստես, ես ստիպուած եմ իմինս գնել: Շաբաթը երեք րուպիի կը վճարեմ միայն հացի համար: Տուն պիտի երթամ եթէ հացը հատած է, մէկ ու կէս րուպիի ես պիտի տամ: Դրամս անպատճառ վճարելու ես»:

Կօշկակարը մօտեցած էր փոքրիկ մատուռի մը, ուր ճամբան գարձուածք մը կ'առնէր: Հեռուն նայեցաւ և կարծես պատին մօտիկը աչքերուն ճերմակ բան մը երեցաւ: Մութը կոխել սկսած էր, ուստի աչքերը շփեց անգամ մը, սակայն այս անգամ ալ չկրցաւ առարկացին ի՞նչ ըլլալը ձգել:

«Այդ տեղ քար չկար», խորհեցաւ «արդեօք գաւզա՞ն մըն է, սակայն շատ սպիտակ է: Ասկէ զատ մարդը հոս ի՞նչ բան ունի»: Կօշկակարը մօտեցած ըլլալով հիմա որոշակի կրնար տեսնել: Յիրաւի մարդ մըն էր ան, կամ մեռած էր կամ ողի: Վասխով համակուած խորհիլ սկսաւ, «Մէկը սպաննած ու մերկացուցած ըլլալու է զինքը՝ և այս վիճակին մէջ հոս ձգած: Եթէ քովը երթալով վերցնեմ, գըլխուս փորձանք կուգայ վերջը»:

Սկսաւ ճամբան շարունակել ու անկիւնը անցաւ: Մարդը այլես չէր տեսներ: Մատուռին քովէն բաւական հեռանալէ վերջ, ետին նայեցաւ անգամ մը ու տեսաւ որ մարդը նստած կը շարժէր և կարծես իրեն կը նայէր: Կօշկակարը ալ աւելի վախցաւ և խորհեցաւ: «Ի՞նչ ընեմ, ճամբաս շարունակե՞մ թէ քովը երթամ: Տէրը զիտէ թէ ո՞վ է այս մարդը և հոս ի՞նչ կ'ընէ: Ո և չ օգտակար նպատակի չի կը բարձական ծառայել: Եթէ քովը երթամ, թերես վրասյարձակի և վնասէ ինծի, այն ատեն ի՞նչ ընեմ: Իսկ եթէ չի յարձակի, ի՞նչ օգուտ կրնամ ունենալ իրեն: Ճեմ ուղեր նեղութեան ենթարկուիլ մերկ մուրացիկի մը համար: Պիտեմ գլխուս գալիքը...»

պէտք պիտի ըլլայ մերկանալ բոլոր ունեցածէս և  
անոր տալ. Աստուծոյ օգնութեամբ այս տեղէն հեռ  
ուանայի...»:

Փութով կը լառաջանար: Մատուռէն բաւական մը  
հեռացած էր արդէն, և ահա, խիզնը սկսաւ զի՞նքը  
տանջել... ճամբուն մէջտեղը կանգ առաւ:

«Ի՞նչ կ'ընես, Սիմոն, ըսաւ ինքնիրեն, նեղուշ  
թեան ենթարկուած և ժանամերձ վիճակի մէջ մարդ  
մը կայ, ու զուն վախնալով, կ'առնես կը քալես...  
արդեօք հարուստ ես, և կը վախնաս որ քեզ կը  
կողոպտե՞ն. Սիմոն, իմաստուն ընթացք չէ՝ այս»:

Բ.

Սիմոն մարդուն մօտեցաւ և ուշադիր ակնարկով  
մը քննեց զայն. երիտասարդ էր ան ու առողջ կազա  
մըւածք ունէր. մարմնոյն վրայ ու է վէրք չկար,  
միայն թէ սառած և վախցած երեւոյթ մը ունէր.  
ընկճուած երեւոյթով մը նստած էր և կարծես, գըւ  
լուխը վեր վերցնելու ու Սիմոնին երեսը նայելու  
ուժ չունէր. Սիմոն աւելի՛ մօտեցաւ: Մարդը կար  
ծես յանկարծ արթնցաւ, գլուխը վեր վերցուց, աչ  
քերը բացաւ և Սիմոնին նայեցաւ: Այդ ակնարկը  
պատճառ եղաւ որ Սիմոն անծանօթը սիրէր. հաս  
նեց տաքուկ կօշիկները, հանեց մէջքի գոտին ու  
կօշիկներուն վրայ դրաւ. վերարկուն ալ հանեց,

— Եյօսելու ժամանակ չէ՛, շուտով հագի՛ր ասոնք,  
ըսաւ Սիմոն, ու մարդուն ձեռքէն բռնելով՝ ոտքի  
հանեց զայն:

Տեսաւ որ սրունքները պնդակազմ էին, մարմինը  
մաքուր ու բարեձև. գէմքն ալ գրաւիչ էր: Վերար  
կուն մարդուն ուսերուն վրայ դրաւ. և որովհետև  
ան վերարկուին թեւերը չի կրցաւ գտնել, օգնեց ու

հագցուց, գօտիովն ալ մէջքը լաւ մը պատատեց.  
գլխարկը հանելով մարդուն գլուխը դրաւ, սակայն  
իր գլուխը մսիլ սկսաւ:

— Ճաղատ գլխուս վրայ մազ չունիմ, սակայն ան  
երկար մազեր ունի... այս տրամաբանութենէն յեւ  
տոյ գլխարկը հանեց ու դարձեալ իր գլուխը դրաւ,  
«Աղէկ կ'ըլլայ որ կօշիկներս ալ հագցնեմ», ըսաւ  
ինքնիրեն, ու մարդը գետնին վրայ նստեցնելով,  
կօշիկները հագցուց. այս ալ լմնցնելէ վերջ, ըսաւ:

— Շարժէ՛, եղբա՛յր, որպէսզի տաքնաս. մի՛ մըտա  
մըտար, այս բաները մեր ձեռքով չեն կրնար կար  
դադրուիլ...»:

Մարդը ոտքի ելաւ և յուզուած՝ Սիմոնին նայեա  
ցաւ, սակայն ո՛չ մէկ բառ կրցաւ արտասանել:

— Ինչո՞ւ չես խօսիր, ըսաւ Սիմոն, ձմեռը հոս  
անցընելու չենք. պէտք է տուն երթալ. ա՛ռ սա  
գաւազանս, անոր կրթնէ, եթէ ինքզինքդ տկար կը  
զգաս. օ՛ն, զգաստացի՛ր...

Մարդը սկսաւ մեղմօրէն քալել. և մինչ ճամբէն  
վար կ'իջնէին, Սիմոն հարցուց.

— Ըսէ՛ տեսնենք, ուրկէ՞ կու զաս:

— Այս կողմերէն չեմ:

— Այս կողմի մարդիկը կը ճանչնամ. ի՞նչպէս  
այս մատունին մօտերը եկար:

— Զեմ կրնար ըսել,

— Մէկը քեզ վիրաւորե՞ց:

— Ոչ ոք զիս վիրաւորեց. ևս Աստուծոյ կողմէ  
պատժուեցայ:

— Այդ սովորական ճշմարտութիւն մըն է. ամէն  
մարդ Աստուծուկ կը պատժուի, սակայն կերպով մը  
պէտք է ամրիլ. Ո՞ւր երթալ կ'ուզես:

— Ինձի համար ամէն տեղ մէկ է:

Սիմոն ապշահար կեցած էր. մարդը չարագործի մը

Երեւոյթը չունէր, խօսակցութիւնը փափուկ էր. սաւ կայն իր մասին ո և է յայտնութիւն ընելէ կը խուսափէր շարունակ։

— Ինծի՞ ինչ իր ինքնութիւնը, կ'ըսէր Սիմոն ինքնիրեն։

— Եթէ կ'ուզես, մեր տունը երթանք, ըստ Սիմոն. հոն կրնաս հանգչիլ և տաքնալ քիչ մը։

Սիմոն դէպի խրճիթ կ'երթար, օտարականն ալ քովիկէն կ'ընկերանար։ Հովք Սիմոնի շապէկին մէջէն անցնելով՝ դող կ'ազդէր։

— Ահա՛ աղուոր վերարկու մը, մենախօսեց Սիմոն. գիւղ գացի մորթէ վերարկու մը գնելու, քափաթանս ալ (երկայն լաթէ վերարկու մը, որ գիւղացիները կը հագնին) ձեռքէ հանեցի. ասկէ զատ, հետո ալ մերկ մուրացիկ մը տուն կը տանիմ. կինա Մարթա, գոն չպիտի մնայ. . .

Սիմոն, անհանգիստ զգաց ինքզինք, երբ Մարթան միտքը ինկաւ. օտարականին վրայ նայեցաւ անգամ մը, և երբ յիշեց այն ակնարկը որ ան նետած էր իր վրայ՝ մատուռին մօտիկը, սիրտը ուժգին կերպով բարախել սկսաւ։

Գ.

Սիմոնին կինը կանուխ մը գործերը լմացուցած, վառելափայտը պատրաստած, ջուրը բերած, տղաքը կերակրած՝ ինք ալ քիչ մը կերակուր կերած էր ու նստած կը խորհէր՝ հացը այսօր կամ վաղը շաղուելուն վրայ. Դեռ հացի մեծկակ կտոր մը կար։

— Եթէ Սիմոն հացը հոն կերաւ, կը խորհէր կինը, և եթէ գիշերը քիչ ուտէ, վաղուան համար բաւարան հաց պիտի մնայ. Մարթա հացը ձեռքին մէջ

դարձնելէ ու չափչիկելէ վերջ ըստ հացը այսօր չը պիտի շաղուեմ, հացի մը ալիւր ունինք մինչեւ ուրբաթ պէտք է բաւեցնել։

Մարթա մէկդի գրաւ հացը և ամուսնոյն շապիկին մէկ պատուածքը կարելու համար սեղանին առջենստաւ. կարելու ատեն միտքը եկաւ ամուսինը, ու անոր գնելիք ոչխարի մորթերը։

— Երանի թէ վաճառականը զինքը չը խարէ. . . բարի մարդուկց շատ դիւրահաւան է. ինք ուրիշը չի խարեր, բայց տղայ մը իսկ կրնայ իր քիթէն բըռնել. ութը բուպլին կարեւոր գումար մըն է. աղւոր վերարկու մը կարելի է գնել անով. Այս ձմեռ առանց վերարկուի նեղուեցանք. Ո՛չ գետեղերք կրցանք երթալ ո՛չ ալ ուրիշ տեղ մը. ունեցած չունեցած կը հագնէր դուրս կ'ելլէր. բաւական ատենէ ի վեր մեկնած է, հիմա եկած ըլլալու էր. իմ փոքրիկ աղաւնեակս չեմ յուսար որ գինովցած ըլլայ։

Մինչ Մարթա այսպէս կը մենախօսէր, դրանը ճըռնչելը ու մէկու մը ներս մտնելը լսեց. ասեղը շապիկին վրայ անցուց և գէպի նրանցք յառաջացաւ. երկու մարդ տեսաւ. մէկը Սիմոնն էր. իսկ միւսը՝ օտարական գիւղացի մը, որուն գլուխը գլխարկ չը կար ու հին կօշիկներ կը կրէր։

Մարթա վայրկենապէս օղիի հոտ առաւ ամուսնոյն շունչեն, «Ահա՛ վախս իրականացաւ, գացեր լաւ մը գինովցեր է», խորհեցաւ Մարթա. Ցաւով տեսաւ, որ «քափթանը» չէր հագած ու միայն վերարկուն վրան կը տեսնուէր. ձեռքը բան մը չունէր, լուռ կեցած էր և անհանգիստ երեւոյթ մը ունէր. կնոջ սիրտը կոտրեցաւ.

— Ամբողջ դրամը օղիին է վատներ, թափառաշրջիկ գինեմոլի մը հետ խմելէ վերջ, հիմա ալ առերտուն է բերեր. . . խորհեցաւ Մարթա,

Մարթա թողուց որ սենեակէն ներս մտնեն. ինքն ալ անոնց ետեւէն մտաւ. տեսաւ որ, օտարականը երիտասարդ էր ու իրենց քափթանը կը կրէր: Քափթանին ներքեւ շապիկ չկար: Օտարականը սենեակ մտնելուն պէս, աչքերը գետին յառած՝ կեցաւ:

— Վախկոտ երեւոյթ մը ունի, աղէկ մարդ չերեսնար, ըստ Մարթա իւրովի, ու փուռին մօտեցաւ խոժոռ դէմքով: Հոն կեցաւ ու սկսաւ շարժումներանին դիտել. Սիմոն չտեսնալու զարկաւ այս շարժումները և գլխարկը նստարանին վրայ դրաւ:

— Մարթա՛, մեզի քիչ մը ուտելու բան կուտա՞ս, ըստ Սիմոն:

Մարթա գլուխը շարժելով, ակռաներուն մէջէն բաներ մը մրմռաց ու փուռին քովէն չի հեռացաւ: Սիմոն դիտեց որ կինը լաւ տրամադրութիւններու մէջ չէր գտնուեր: Զի նշարել ձեւացուց և օտարականին ձեռքէն բռնելով:

— Նստէ, եղբայր, եկուր ճաշենք, ըստաւ: Օտարականը նստաւ նստարանին վրար:

— Մարթա՛, բան մը չե՞ս եփած:

— Եփեցի, սակայն ո՛չ քեզի համար. օղին խելքդ թռցուցե՛ր է. գուրս ելար վերարկու մը գնելու, ու հիմա տուն կը վերադառնաս առանց վրայի քափթանիդ ու հետդ մերկ թափառաշրջիկ մը կը բերես. ձեզ նման գինովերուն ճաշ չունիմ:

— Կը բաւէ, Մարթա, ինչո՞ւ սանձարձակ լեզուիդ կուտաս. առաջին անգամ հարցուր, թէ ի՞նչ տես սակ մարդ է հետինս:

— Դրամը ի՞նչ ըրիր:

Սիմոն քափթանին գրպանէն դրամը հանեց ու սեղանին վրայ դրաւ:

— Ահա՛ դրամը. Թրիվանօֆ պարտքը չի վճարեց. խոստացաւ վաղը վճարել:

Մարթա ա՛լ աւելի կատղեցաւ: Սկզմոն վերարկուն չէր գնած, քափթանը մերկ մուրացիկին յանձնած և զանիկա առած հետը տուն էր բերած. զրամը պահելու համար սեղանին վրայէն քաշել առնելէ վերջ աւելցուց:

— Ճաշ չկայ. ես քու մերկ մուրացիկներդ չեմ կրնար կերակրել:

— Մարթա՛, կամ լեզուդ բռնէ, և կամ ինծի մը տիկ ըրէ:

— Գինով խենթէ մը, ի՞նչ խելացի խօսք կարելի է ակնկալել: Քեզ հետ չամռասնանալով ո՛րքան իւմաստուն բան մը ըրած կ'ըլլայի, իյմա՛ն. մայրս քանի մը կտոր ճերմակելէն տուաւ ինծի, ծախեցիր, ու դրամը օղիի տուիր. գուրս ելար վերարկու մը գնելու համար, այդ դրամն ալ խմելիքի տուիր...

Սիմոն ուզեց բացատրել մարդուն ուր հանգիպած և օղիի համար քսան կոպէկ տուած ըլլալը. սաւկայն Մարթա զայրացած, մէկ բառ արտասանելու պատեհութիւն չէր տար: Տասը տարի առաջ բոլոր պատահածներու տրդակը բացաւ և բառերը իրարուետեւէ տեղացուց: Յանդիմանեց ու յանդիմանեց և վերջն ալ Սիմոնին վրայ խոյացաւ ու զգեստին թեւերը քաշքելով, ըստաւ:

— Տո՛ւր սա վերարկուս, ատիկա վերջինս է. սաւկայն քու հո՞գդ է, կ'առնես, աղուոր մը կը հագնիս: Շո՛ւտ ըրէ, տո՛ւր, թշուառակա՛ն շուն... սատանան քեզ տանի:

Սիմոն վերարկուին մէկ թեւը հանելու վրայ էր: Մարթայի քաշքելուն վրայ կարերը քակուեցան. Մարթա բռնութեամբ քաշեց հանեց զայն, գլխուն վրայէն նետեց ու գէպի գուռ յառաջացաւ. գուրս ելլելու վրայ էր, յանկարծ կեցաւ երկու մտքէ էր. մէկ կողմէն կ'ուզէր վրէժը լուծել, միւս կողմէ օստարականին ո՛վ ըլլալը կը փափաքէր հասկնալ:

Դ.

Մարթա կանգ առաւ ու ըսաւ.

— Եթէ իրապէս լաւ մարդ մը ըլլար, մերկ չէր ըլլար. նոյն իսկ շապիկ մը չունի. հաւանաբար չարագործին մէկն է. ինչո՞ւ ուր գտնալդ չես ըսեր:

— Եկածէս ի վեր ջանացի այդ կէտը բացատրել, երբ մատուախն քովէն կու գայի, այս մարդը հոն սառած վիճակի մէջ գտայ: Ամառ չէ որ, մարդ մերկ նստի. Սստուած զիս իր մօտը առաջնորդեց, եթէ ոչ պիտի մեռնէր հոն: ի՞նչ ընել էր պարտակառ նութիւնս. ի'նչպէս կրնայի գուշակել թէ՝ ի'նչ էր պատահած այս մարդուն. ուստի, հագուեցուցի ու հոս բերի. մի՛ բարկանար Մարթա՛, ինչո՞ւ կը մեղանչես, ամենքս ալ պիտի մեռնինք... ջանանք իրարու սիրտ չի կոտրել...

Մարթա ուզեց դրաձեալ յանդիմանել. սակայն, օտարականին վրայ նայեցաւ ու չուց. օտարականը անշարժ նստած էր նստարանին մէկ քովիկը:

Զեռքերը խաչածե դրած էր սրունքներուն վրայ, գլուխը կախ էր ու աչքերը գոց. Մարթա լուռ էր:

— Մարթա՛, ըսաւ Սիմոն, քու մէջ Սստուծոյ հոգ փին չկա՞յ: :

Մարթա լսեց այս բառերը. օտարականին վրայ ակնարկ մը նետեց և մէկն ի մէկ սիրտը կակուղացաւ: Դուրս ելաւ, փուռին մօտ գնաց, Աման մը դրաւ սեղանին վրայ. մէջը քվաս (տեսակ մը հեղուկ) լեցուց, պահած հացի կտօրն ու դգալ բերաւ:

— Ահա՛ կերակուրնիդ, ըսաւ Մարթա:

Սիմոն օտարականը քովը կանչեց. հացը ամանին մէջը փշրեց և սկսաւ ուտել:

Մարթա սեղանին մէկ անկիւնը նստած ու դէմքը

ձեռքին հանգչեցուցած, օտարականը կը քննէր: Մարթա սկսաւ խղճալ անոր վրայ ու սիրել զայն. օտարականին մոայլ գէմքը յանկարծակի պայծառացաւ, աչքերը կնոջը ուզզեց ու ժպտեցաւ:

Ճաշերնին լմնցուցին. Մարթա սեղանը վերցուց, ու սկսաւ օտարականը հարցաքննել:

— Ո՞ւրիէ կու գասւ:

— Այս կողմերէն չեմ:

— Ինչպէ՞ս եղաւ որ այդ ճամբուն վրայ ինկար:

— Չեմ կրնար ըսել:

— Մէկը քեզ կողոպտե՞ց:

— Ո՞չ... Սստուած զիս պատժեց:

— Եւ հոն, այնպէս մերկ պառկա՞ծ էիր:

— Այս, բոլորովին մերկ. սոսկալի կը մսէի. Սիմոն զիս տեսաւ ու վրաս գթաց. քաֆթանը հանեւ լով ինծի հագցուց և զիս տուն առաջնորդեց. Հոս գուն զիս կերակրեցիր և մեղքնալով խմելու ջուր տուրի ինձ: Ասոր համար Սստուած քեզ անպատճառ պիտի վարձատքէ:

Մարթա ոտքի ելլելով, պատուհանին մէջէն առաւ Սիմոնի կարկտուած հինցած շապիկը և օտարականին տուաւ: Տաբատ մը գտաւ՝ ան ալ տուաւ:

— Ա՛ռ, ըսաւ, կը տեսնեմ թէ շապիկ մը իսկ չունիս, Հազի՛ր սա և ուզած տեղդ պառկէ:

Օտարականը քաֆթանը հանեց, շապիկը հագաւ և ձեղնայարկը ելնելով պառկեցաւ: Մարթա լոյսը մարեց քաֆթանին մէկ ծայրը վրան առաւ և ամուսնոյն քովիկը պառկեցաւ. Սակայն, ո՛չ կրցաւ քնանալ և ո՛չ ալ օտարականը մտքէն հեռացնել: Երբ կը մտածէր կերած հացի վերջին կտորին, հետեւեալ օրը հաց չըլլալուն, օտարականին տուած տաբատին ու շապիկին մասին՝ անհանգիստ կ'զգար ինքզինքը. սակայն, երբ միտքը կ'լինար օտարականին ժպիտը, սիրտը կը հրձուէր ուրախութեամբ:

Մարթա երկար ատեն անքուն մնաց, վերջը վերջը հասկցաւ թէ Սիմոն ալ չէր քնանար և քափթանը վրան կը քաշէր:

— Սիմոն, ըսաւ Մարթա, հացի վերջին կտորը կերանք և վաղուան համար հաց չեմ շաղած. ի՞նչ պիտի ընենք, դրացի Ամէլիայէն քիչ մը բան փոխ առնե՞մ, ի՞նչ կ'ըսես:

— Որքա՛ն ատեն որ ողջ ենք, անօթի չպիտի մը նանք, պատասխանեց Սիմոն:

Կինը ձայն չի հանեց ու խորհիլ սկսաւ. յետոյ աւելցուց.

— Աղէկ մարդ մը կ'երեւայ, սակայն իր մասին ի՞նչո՞ւ բան մը չի յայտներ:

— Ինձի այնպէս կու գայ, որ չի կրնար:

— Ինձի նայէ Սիմոն, մենք ուրիշներուն կուտանք, ուրիշները մեզի ի՞նչո՞ւ չեն տար:

Սիմոն պատասխան մը չկրնալով գտնել, ըսաւ.

— Կը բաւէ, ա՛լ չը խօսինք:

Եւ միւս կողմը դառնալով, սկսաւ քնանալ:

b

Հետեւեալ առաւօտուն. Սիմոն արթնցաւ. տղաքը տակաւին կը քնանային. կինը գրացիին գացած էր քիչ մը հաց փոխ առնելու համար: Օտարականը իր քիչ մը հաց փոխ առնելու համար: Օտարականը իր քիչ մը հաց փոխ առնելու համար:

— Բարեկամս, ստամոքսը հաց և մերկ մարմինը զգեստ կ'ուղէ, թու ապրուստի շահելու ես. ձեռագէդ ի՞նչ կու գայ տեսնենք:

— Ոչինչ զիտեմ:

Սիմոն զարմացած, աւելցուց.

— Մարդ կամքի միջոցաւ ամէն ինչ կրնայ սովորիլ:

— Մարդիկ կ'աշխատին, ես ալ կ'աշխատիմ:

— Անունդ ի՞նչ է,

— Միքայէլ է:

— Լա՛ւ. եթէ քու ինքնութեանդ մասին ո և է յայտնութիւն չես ուզեր ընել, այդ քու գիտնալիք բանդ է, սակայն, ապրուստի շահելու ես: Եթէ ինձ նման աշխատիս, կը խոստանամ քեզ պահել:

— Աստուած քեզ վարձատրէ. կ'ուզեմ սովորիլ. ցոյց տուր ընելիքս:

Սիմոն գերձանը առաւ, մատներուն մէջէն քաշեց և մոմոտելու կերպը ցուցուց:

— Տե՛ս, գժուար չէ:

Միքայէլ գիտեց. յետոյ գերձանը ոլորեց մատնեւրուն մէջ և յաջողեցաւ մէկ անդամէն նմանցնել ու ծայր մը շինեց:

Սիմոն ցոյց տուաւ ներքին և արտաքին ներփանն ները իրարու փակցնելու կերպը. Միքայէլ ա՛յս ալ անմիջապէս հասկցաւ. գարպետը յետոյ սովորեցուց ասեղ անցընելու և կարելու ձեւը. Միքայէլ շուտով այս ալ սովորեցաւ. կօշկակարը ինչ որ ցուցուց Միքայէլ անմրջապէս իւրացուց և երեք օրուան մէջ սկսաւ գործել այնպէս, որ իբր թէ ամբողջ կեանքին մէջ կօշկակար եղած ըլլար:

Անդադար կ'աշխատէր. քիչ կ'ուտէր և երբ գործը կ'աւարտէր, լորիկ նստելով վեր կը նայէր, Քիչ անգամ փողոց կ'ելնէր. պէտք եղածին չափ միայն կը խօսէր. ո՛չ կը խնդար և ո՛չ ալ կը կատակէր. միայն մէկ անգամ իննդալը տեսան ան ալ առաջին իրիւ կունը՝ երբ կինը կերակուր տուաւ:

—————o————

Զ.

Օրեր ու շաբաթներ իրարու յաջորդեցին ու ամբողջ տարի մը սահեցաւ անցաւ, Միքայէլ Սիմոնի տան մէջ կը բնակէր ու անոր համար կ'աշխատէր, Սիմոնի աշակերտին համբաւը տարածուեցաւ, Մարդիկ կ'ըսէին թէ Միքայէլի նման կոկիկ, զօրաւոր կօշիկներ չինող չկար, Ամէն կողմէ Սիմոնի կը դիմէին կօշիկներու համար, այս պատճառաւ անսկաւ հարստանալ:

Զմեռ օր մը Սիմոն և Միքայէլ նստած կ'աշխատէին, Երեք ձիով ու զանգակներով բալիսիր մը կանգ առաւ հիւզակին առջև, պատուհանէն դուրս նայեցան ու տեսան որ բալիսիրին վրայէն մարդ մը ցատկելով դուռը կը բանար, Մորթէ վերարկուի մը մէջ փաթթուած ազնուական մը զուրս ելաւ կառաքէն և դէպի Սիմոնին հիւզակը յառաջացաւ, Մարդա վազեց զուռը բացաւ, աղնուականը ծռելով դռնէն անցաւ, երբ ուղիղ կեցաւ գրեթէ ցեղունին կը դպէր գլուխը, կարծես սենեակին կէսը լեցուց:

Սիմոն ոտքի ելնելով խոնարհութիւն մը ըրաւ և օտարականին նայեցաւ զարմացմամբ, անոր նման մարդ երբէք չէր տեսած, ինք մարմնապէս նիհար էր, Միքայէլ ալ նիհար էր, Մարդա չորցած տարեխի կը նմանէր, այս մարդը կարծես ուրիշ աշխարհէ մը կուգար, դէմքը պայծառագեղ էր ու գիրուկ, վիզը ցուլի մը վիզին կը նմանէր ու երկաթէ կազմ ունէր,

Աղնուականը կանոնաւոր շնչառութիւնը վերըսացաւ, վերարկուն հանեց, նստարանին վրայ նստաւ ու ըսաւ,

— Վարպետը ո՞վ է մէջերնիդ.

Սիմոն յառաջ անցնելով ըսաւ,

— Ես եմ բարձրապատիւ տէ՛ր.

Աղնուականը խօսքը ծառային ուղղելով պոռաց, — Թէօտօր, կաշին ներս բեր:

Ծառան ծրար մը ձեռքը ներս վազեց, աղնուականը ծրարը առաւ սեղանին վրայ գրաւ:

— Բա՛ց, պոռաց.

Ծառան ծրարը բացաւ, աղնուականը մատովը կաշին գուցնելով ըսաւ,

— Կօշկակար, մտիկ ըրէ՛, կը տեսնե՞ս այս կաշին,

— Այո՛, բարձրապատիւ տէ՛ր,

— Ինչ տեսակ կաշի ըլլալը կրնա՞ս ըսել.

Սիմոն անգամ մը շօշափեց կաշին ու աւելցուց,

— Հնտիր կաշի է,

— Միամիտ արարած հարկաւ ընտիր կաշի է.

Կեանքիդ մէջ այսպիսի կաշի տեսած չես, գերմանական կաշի է ու քսան րուպլի կ'արժէ :

Սիմոն ապշտահար կակազեց, «Ո՞ւր կրնայի տեսնել այս օրինակ կաշի».

Աղէ՛կ, աղէ՛կ, ոտքիս յարմար կօշիկներ պիտի կրնա՞ս շինել այս կաշիէն.

— Կրնամ շինել, բարձրապատիւ տէր.

— Օ՛, կրնա՞ս, լա՛ւ, ըսաւ աղնուականը, աղէկ նկատի առ թէ որո՞ւ համար պիտի շինես այս ոտք նամանները և թէ որպիսի սուզ կաշիէ մը, այնպէս պէտք է շինես որ առանց ճաթեցնելու կամ ձեւափոխելու կարենամ տարի մը հագնիլ, Եթէ կրնաս, առ կաշին և կտրէ զայն, եթէ չես կրնար ըսէ և մի՛ վատներ կաշին, արդ, ահա կ'աղղաւարեմ, եթէ կօշիկները ճաթին կամ տարիէ մը առաջ իրենց ձեւը կորսնցնեն, քեզ բանտարկել պիտի տամ, իսկ եթէ չի ճաթին կամ չը հիննան, աշխատութեանդ համար տա՞ւը բուպլի պիտի աղամին գրայիր Գօս. Բիблиոթեկա ZUR-ARM.CCP 2

Աղնուականը կաշի պիտի տամին գրայիր Գօս. Բիблиոթեկա ZUR-ARM.CCP 2

Ա. Ա. Մաշնուկ Ա. Մաշնուկ

Սիմոն շուարած ինչ ըսելը չէր գիտեր. Միքայէւ լին դարձաւ նայեցաւ և արմուկովը մշտելով փըսաց, «Գործը վրաս առնե՞մ». Միքայէլ գլուխը շարժեց, հասկցնել ուզելով՝ «Այո, ա՛ռ».

Սիմոն հաւանեցաւ զոյգ մը կօշիկ շինել, որ մէկ տարի առանց ճաթելու կամ ձեւափոխուելու, պիտի հագնուէր:

Ազնուականը հրամայեց ծառային աջ ոտքը քաշել և ոտքի ոտնամանը գուրս հանելով գետինը դրաւ:

— Ա՛ռ նայիմ ոտքիս չափը, ըսաւ:

Սիմոն տամսնեեթը մատնաչափ երկար թուղթ մը կտրելով տարածեց. գետինը նստաւ, ձեռքերը գոգնոցին սրբեց, ազնուականին գուլպաները չաղտուաելու համար և սկսաւ չափը առնել, ներբանը չափելէ վերջ, երբ կարգը եկաւ բումբին, թուղթը կարծ եկաւ. Սրունքը, բումբին տեղը, գերանի մը պէս հաստ էր:

— Հոգ տար, որ սրունքին տեղը նեղ չընես:

Սիմոն ոտքի ելաւ ուրիշ թուղթի կտոր մը աւելցընելու համար. ազնուականը նստած տեղը ոտքին մատները կը շարժակէր գուլպաներուն մէջ և միևնոյն տաեն հիւզակին մէջի մարդիկը կը դիտէր. Միքայէլը աչքին զարկաւ.

— Աս ո՞վ է, ըսաւ:

— Գործաւորս է, կօշիկները ան պիտի շինէ:

— Լաւ. նայէ՛ ուրեմն, ըսաւ ազնուականը, Միքայէլին, ջանա՛ զանոնք ալնպէս մը շինել, որ տարի մը դիմանան:

Սիմոն գարձաւ նայեցաւ և տեսաւ, որ Միքայէլ փոխանակ նորեկին նայելու, անկէ անդին գտնուող բան մը կը դիտէր. Միքայէլ նայեցաւ ու նայեցաւ, յանկարծ ժպտեցաւ և ամբողջ գէմքը ճառագայթեց:

— Ի՞նչ բանի վրայ կը ծիծալիս, ապօ՛ւշ, պոռաց

ազնուականը, աւելի ազէկ է որ հոգ տռնէս և ոտքնամանները ժամանակին լմացնես:

— Որոշեալ ժամուն անոնք պատրաստ պիտի ըլւլան. ըսաւ Միքայէլ:

— Բաւակա՞ն է:

Ազնուականը ոտնամանները և մուշտակէ վերաբերն հագաւ, ծայրերովը լաւ մը փաթթուելէ վերջ գէպի գուռը յառաջացաւ. սակայն, մոռնալով ծռիլ, գլուխը դրան վերի մասին զարկաւ:

Ազնուականը հայհոյեց և գլուխը շփեց. յետոյ, բալխիրը մտնելով հեռացաւ, Անոր մեկնելէն վերջ, Սիմոն ըսաւ.

— Ահա՛ քեզի յուշ մը, զոր չես կրնար թակով մը սպաննել. զլխովը զբա՞ն գերանը խորտակեց, բայց բանի տեղ չի դրաւ:

— Այսպէս ապրելով անշուշտ կը գիրնան ու կը խորհիմ, որ նոյնիսկ մահը այդ մեծ մասի կտորին բան մը չկրնար ընել, պատասխանեց Մարթա.

Է.

Քիչ վերջ, Սիմոն Միքայէլին ըսաւ:

— Գործը վրանիս առինք, պէտք է ջանանք որ նեղութիւն չստեղծենք. կաշին թանկազին է և ազնուականը չարամոյն, զգոյշ ըլլանք, սխալ չընենք: գուշն առ չափերը, աչքերդ աւելի ճկուն են և հիմա դուն ինձմէ աւելի՛ ճարտար ես. կտրէ՛ կաշին իսկ ես երեսները պիտի լրացնեմ:

Միքայէլ հնազանդեցաւ. առաւ կաշին, տարածեց զայն սեղանին վրայ, երկուքի ծալլեց, առաւ դաշնակը և սկսաւ կտրել:

Մարթա եկաւ և դիտեց զայն, ու ըրածը տեսնե-

լով զարմացաւ. Մարթա, որ կօշկաշինութիւնը գիւտէր, դիտեց որ Միքայէլ մորթը ոչ թէ ոտնամանսներու, այլ մուճակներու համար կը կտրէր, ուզեց խօսիլ, սակաւ խորհնելէ վերջ, ըստ ինքնիրեն.—

— Թերեւս ես չեմ գիտեր թէ ինչպէս կը շինեն մարդոց կօշիկները, կարծեմ թէ Միքայէլ աւելի աւզէկ գիտէ, չեմ ուզեր միջամտել.

Երբ ամէն բան կտրեց, առաւ գերչանը և սկսաւ կարել, ոչ թէ զոյդ կարով, ինչպէս կը կարեն, այլ մուճակներու համար գործածական պարզ կարով. Մարթա նորէն զարմացաւ, բայց զարծեալ չուզեց միջամտել: Միքայէլ անընդհատ մինչև կէս օր կարեց: Յետոյ Սիմոն եկաւ և տեսաւ որ Միքայէլ ազնըւականին բերած կաշիէն մուճակներ շիներ էր, սկսաւ քրթմնջել.

— Միքայէլ ի՞նչպէս եղաւ որ շուարեցաւ, ամբողջ տարի մը մեր հետը ապրեցաւ, սիսալ մը չըրաւ, իսկ հիմա այսօրինակ սիսալ մը գործեց: Ազնուականը ոտանամաններ ապսպրեց և Միքայէլ առանց ներբանի մուճակներ շիներ և այսպէսով կաշին պարապ տեղ վատներ է: Ի՞նչ պատասխան պիտի տամ մարդուն. ասոր նման ուրիշ մորթ ալ չեմ կրնար գտնել...

— Ի՞նչ ըրեր ես, բարեկամ, ըստ Միքայէլին, զիս փճացուցիր. մարդը կօշիկներ ապսպրեց, և գունինչ շիներ ես:

Դեռ խօսքը աւարտած չէր, երբ դուռը ուժգին կերպով զարնուեցաւ. պատուհանէն նայեցաւ. մէկը եկած էր ձիով և ձին կը կապէր. զուռը բացին. ազնուականին ծառան էր. ներս մտաւ:

— Բարի լո՞յս.

— Բարի լո՞յս... ի՞նչ կ'ուզես:

— Տիրուհիս դրկեց զիս, ոտնամաններուն հաւմար... ազնուականը ա՛լ ոտնամաններուն պէտք չունի, մեռաւ:

— Մի՛ ըսեր:

— Զեր տունէն մեկնելէ վերջ, իր տունը հասանելէն առաջ՝ բալխիրին մէջ մեռաւ. երբ տուն հասանանք, դուրս հանեցինք և տոպրակի մը պէս գետանին վրայ տարածեցինք. բոլորովին մեռած և սառած էր. գժուարաւ կրցանք զայն բալխիրէն դուրս հանել Տիկինը զիս ձեզի զրկեց ըսելու. — «Ըսէ՛ կօշկակարին որ ոտնամանները ապսպրող և կաշին ձգող մարդը՝ անոնց այլևս պէտք չունի, և ապսպրէ որ այդ նոյն կաշիէն ննջեցեալին համար մուճակներ շինեն, և սպասէ՛ մինչև որ պատրաստ ըլլան և զանոնք քեզի հետ տուն բեր»: Ահա՛ այս է գաւուս պատճառը:

Միքայէլ սեղանին վրայէն կաշիին կտորները ժողովեց, զանոնք ծրար մը ըրաւ. առաւ մուճակները որոնք բոլորովին լննցած էին, իրարու մէջ անցուց, զանոնք իր գոգնոցովը սրբեց և երիտասարշին երկնցուց: Երիտասարդը առաւ զանոնք:

— Մնաք բարո՛վ, վարպետնե՛ր, և բարի յաջուզութիւն...

Բ.

Տարի մը անցաւ, երկու տարիներ անցան. հիմա Միքայէլ շինդ տարիէ ի վեր Սիմոնին հետ կ'ապրէր. առաջուան պէս կ'ապրէր: Ոչ մէկ տեղ կ'երթար. պարապ նիւթերու վրայ չէր խօսեր և բոլոր այս ժամանակամիջոցին, երկու անգամ ժպտեցաւ. անգամ մը՝ երբ Մարթա իրեն կերակուր տուած էր, և երկրորդ անգամ՝ երբ ազնուականը սենեակին մէջ նստած էր:

Սիմոն շատ գոհ էր իր գործաւորէն և այլևս չէր հարցներ անոր, թէ ուրկէ՞ եկած էր:

իր միակ վախը ան էր որ, Միքայէլ կրնար զինքը  
թողուլ։ Օր մը, տունը նստած էին, Մարթա կաթ-  
սան կը տաքցնէր, տղաքը նստարաններուն վրայ  
կը խաղային և պատուհանէն դուրս կը նայէին։ Սի-  
մոն գործիքը կը սրցնէր պատուհանի մը առջե, իսկ  
Միքայէլ, միւս պատուհանին առջե նստած՝ կրունկ  
մը կը բարձրացնէր։

Տղաքներէն մէկը նստարանին վրայէն վազելով,  
Միքայէլին քով նկաւ և անոր ուսերուն վրայ ծռե-  
լով պատուհանէն դուրս նայեցաւ։

— Հօրեքքայր Միքայէլ, ըսաւ տղեկը, նայէ՛, վա-  
ճառականի մը կինը մեղի կուգայ երկու փոքրիկ  
աղջիկներով. աղջիկներէն մին կաղ է։

Հազիւ թէ տղան այս լուրը տուած էր, Միքայէլ  
անմիջապէս իր ձեռքին գործը վար դրաւ, դարձաւ  
դէպի պատուհանը և փողոցն ի վեր նայեցաւ։ Սիմոն  
ապշեցաւ. Միքայէլ երբէք դուրս նայելու սովորու-  
թիւն չունէր. սակայն նիմա կարծես պատուհանին  
փակած էր և բանի մը կը նայէր. Սիմոն ալ դուրս  
նայեցաւ. տեսաւ կոկիկ հագուած կին մը, որ շիտակ  
իր դուռը կը յառաջանար. երկու փոքր աղջիկնե-  
րուն ձեռքերէն բռնած էր ան։

Մուշտակէ վերարկուներ և գլուխներուն վրայ  
ալ շալեր ունեցող պղտիկները այնքա՞ն իրարու-  
կը նմանէին, որ գժուար էր զանոնք իրարմէ զանա-  
զանել. Բայց մին կաղ էր և այդ բանը քալած ա-  
տենը կ'երեւէր. կինը սանդուխներէն վեր ելլելով  
նրբանցքը ժտաւ, դուռը զանելով մգլակը վերցուց  
և ներս մտաւ։

— Բարի լո՞յս վարպետներ։

— Բարի եկաք, ի՞նչ բանի պէտք ունիք։

Կինը սեղանին քովը նստաւ, երկու փոքրիկ աղ-  
ջիկները ամօթխած, իր ծռւնկերուն կը փարէին։

— Կ'ուզեմ որ այս փոքր աղջիկներուն կաշիէ  
ոտնամաններ շինէք գարնան համար։

— Շատ լաւ. երբէք այնքան փոքրը շինած չենք,  
բայց կրնանք շինել, ծայրերը կաշիէ՞ թէ լաթէ ըլ-  
լան։ Հոն է Միքայէլը ամէն բան ձեռքէն կու գայ։  
Սիմոն դարձաւ Միքայէլին նայեցաւ և տեսաւ որ  
ան իր գործը մէկ կողմ նետած՝ ուղղակի պատիկ  
աղջիկներուն կը նայէր։ Սիմոն զարմացաւ. իրաւ է  
որ պղտիկ աղջիկները գեղեցիկ էին ու աչուկներով,  
գիրուկ և վարդագոյն աղուոր վերարկուներ ու  
թաշկինակներ ունէին, բայց այսուհանդերձ Սիմոն  
չէր հասկնար թէ Միքայէլ ինչո՞ւ զանոնք այնքան  
ուշադրութեամբ կը քննէր, իբրև թէ ճանչնար զա-  
նոնք։ Սիմոն ապշահար՝ գինը որոշելու համար  
սկսաւ կոնջ հետ խօսիլ. սակարկութիւնը լմացնելէ  
վերջ չափերը պատրաստեց, կինը փոքրիկ կաղ աղ-  
ջիկը իր գիրկը առաւ և ըստաւ։

— Այս փոքր աղջնակէն երկու չափ առ. մին գա-  
լարուած ստքէն և երեք հատ ալ միւս ստքէն. ի-  
րենց ստքերը յարանսան են. անոնք երկուորեակ-  
ներ են . . .

Սիմոն չափերը առաւ և փոքրիկ հաշմանդամին  
վրայ նայելով ըստաւ։

— Այսքան գեղեցիկ մանուկ մը, ինչպէ՞ս ասանկ  
եղաւ. ասա՞նկ ծնաւ։

— Ո՛չ ըստաւ կինը, իր մայրը ճգմեց զինքը.

Մարթա փափաքելով գիտալ թէ ո՛վ էր կինը և  
աղաքը որո՞ւ էին, խօսակցութեան մէջ մտաւ և  
հարցուց։

— Դուն իրենց մայրը չե՞ս:

— Ո՛չ փոքրիկ տիրուհի, իրենց մայրը չեմ, ոչ  
ալ անոնց մէկ աղջականը։ Անոնք բոլորովին ան-  
ձանօթներ էին ինձի, զանոնք որդեգրեցի։

— Քու զաւակներդ չըլլալով հանդերձ զանոնք  
այսքան կը սիրե՞ս.

— Ինչպէ՞ս չը սիրեմ. երկուքն ալ լանջքիս վրայ  
անուցի. զաւակ մը ունէի բայց Աստուած առաւ  
ձեռքէս. Անոր վրայ այնքան հոգ չունէի, որքան  
ունիմ ասոնց վրայ:

— Որո՞ւն տղաքներն են ասոնք:

թ.

Կինը խօսիլ սկսաւ և պատմեց անոնց ամբողջ  
պատմութիւնը:

— Վեց տարի առաջ, ըստաւ, այս երկու տղաքները  
մէկ շաբթուան մէջ որբացան: Հայրը երեքշաբթի  
օր թաղուցաւ, մայրը ուրբաթ օր մեռաւ: Իրենց  
հօրը մահէն երեք օր վերջը ծնան և մայրերնին  
իրենց ծնելէն հետք օր մը իսկ չապրեցաւ: Այդ ժաւ  
մանակ ամուսնոյն հետ քաղաքը կը բնակէինք: Դրացիներ էինք,  
իրենց մենակեաց զիւղակը մը՝ անտառէն  
փայտ կտրելով կ'ապրեցնէր իր ընտանիքը: Օր մը  
վրան ծառ մը ինկաւ, և աղիքները դուրս թափեց: Հաղիւ  
թէ տուն բերած էին զանի, հոգին աւան-  
դեց: Նոյն շաբթուան մէջ կինը երկուորեակներ  
ծնաւ - այս պղտիկ աղջիկները - . ան բոլորովին  
միայնակ էր, խեղճութեան և միայնութեան մէջ,  
մէկը չունէր իրեն օդնող:

«Ծննդաբերութեան ժամանակ միայնակ էր. միայ-  
նակ էր նաև մահուան ժամուն: Յաջորդ առաւօտ  
գացի տեսնելու համար թէ ինչպէս էր, պաղած ու  
կարծրացած գտայ զայն: մեռած ատեն գլորուած  
էր այս պղտիկ աղջկան վրայ զինքը ճղմած և ոտքը  
դալարած էր: Դրացիները եկան շտապով, լուացին

մարմինը ու դուրս հանեցին և զագաղ մը շինելով  
թաղեցին զինքը: Անոնք ամէնքն ալ բարի մարդիկ  
էին. բայց մէջտեղը երկու փոքրիկ աղջիկներ կա-  
յին. ի՞նչ պիտի ընէին զանոնք: Ես կայի միայն որ  
նորածին մը ունէի. ութը շաբաթէ ի վեր կաթ  
կուտայի տղուս, ուստի, ժամանակի մը համար փոք-  
րիկ աղջիկները առի: Գիւղացիները մէկտեղ ժող-  
ւեցան և զանոնք ինչ ընելու մասին խորհեցան,  
խօսեցան և յետոյ ինձի ըսին:

— Մարիս', ատեն մը զանոնք պահէ և մեզի ժաւ  
մանակ տուր խորհելու և բան մը որոշելու:

«Զանոնք սնուցանել սկսայ և կը մտածէի թէ,  
կաղը սնուցանելու հարկ չկար. բնաւ չէի կրնար  
յուսալ թէ՝ ան կրնար ապրիլ, Բայց յետոյ ինքնիւ-  
րենս ըսի: «Ինչո՞ւ պղտիկ հրեշտակին հոգին տա  
ռապի՛»: Խղճացի վրան և զայն ալ կերակրեցի. այս-  
պէս, երեքն ալ կաթովս սնուցի: Երիտասարդ և աւ-  
ոսղ էի այն ատեն, և Աստուած այնքա՞ն առատ  
կաթ տուաւ ինձի, որ չէի գիտեր թէ՝ աւելին ի՞նչ  
ընելու էի: Երկուքը միենոյն ատեն կը զիւղճնէի,  
իսկ երրորդը կ'սպասէր. Երբ մին կշտանար, եր-  
րորդը կ'առնէի: Այսպէս, Աստուած թոյլ տուաւ որ  
երեքն ալ սնուցանեմ:

«Մանչս երկու տարեկան չեղած մեռաւ. Աստուած  
անկէ ի վեր ինձի զաւակ չի պարզեւեց: մեր նիւր-  
թական վիճակը բարելաւուեցաւ և հիմա մենք վա-  
ճառականին հետ աղօրիքը կը բնակինք: լաւ կը  
շահինք և աղէկ կ'ապրինք: Զաւակ չունիմ. առանց  
այս տղաքներուն ինչպէ՞ս միայնակ պիտի կրնամ  
ապրիլ, ինչպէ՞ս կրնամ դադրիլ զանոնք սիրելէ...  
Անոնք ինձի համար այն են, ինչ որ է մեղրամոմը  
մոմին համար»:

Կինը մէկ ձեռքովը կաղ աղջիկը կուրծքին վրայ

սեղմեց, իսկ միւս ձեռքովը իր այտերէն վար հսսող արցունքը սրբեց . Մարթա հառաչեց ու ըսաւ .

— Հին առած մը կայ որ շատ ճիշդ է .

«ՄԱՐԴԻԿ ԿՐՆԱՆ ՍՌԱՆՑ ՀՕՐ ԿԱՅ ՄՈՒ ԱՊՐԻԼ, ԲՈՅՑ ՍՌԱՆՑ Ա.ԱՏՈՒԾՈՅՑ, ԵՐԲԵՇՔ» :

Երբ այսպէս իրենց մէջ կը խօսակցէին, Միքայէլին նստած անկիւնէն լոյս մը ելաւ՝ կայծակի մը շողիւնին նման, ու ամբողջ սենեակը լուսաւորեց . աւ մենքն ալ իրեն նայեցան. տեսան որ ձեռքերը ծունակերուն վրայ ծալլած նստած էր և դէպի վեր կը նայէր ու կը ժպտէր .

Ժ .

Կինը տղաքներուն հետ մէկտեղ մեկնեցաւ . Միքայէլ նստարանէն ելաւ, գործը վար դրաւ, հանեց գոգնոցը, հնակարկատին ու անոր կնոջը առջին խունարհութիւն մը ըրաւ և ըսաւ .

— Մնաք բարո՞վ, տանուտէրներ, Աստուած ինծի ներած է . գո՞ւք ալ ինծի ներեցէք, եթէ սխալ մը գործեցիր .

Տեսան որ Միքայէլէն լոյս մը կը ցոլար . Սիմոն ոտքի ելաւ, Միքայէլին առջեւ խոնարհեցաւ և ըսաւ .

— Կը տեսնեմ, Միքայէլ, որ դուն սովորական մարդ մը չես, և ես չեմ կրնար վար դնել կամ հարցափորձել քեզ, այսու հանգերձ, միայն սա հարցումներուս պատասխանէ . «Ինչո՞ւ երբ քեզ գտայ և տուն բերի, տիսուր էիր, և ինչո՞ւ երբ Մարթա ու տելիք տուաւ քեզի, իրեն նայելով՝ ժպտեցար և անկէ վերջ աւելի՛ զուարթ եղար, Յետոյ, երբ աղանդականը եկաւ ոտնամաններ ապսպրելու համար, երկրորդ անգամ ինչո՞ւ ժպտեցար ու աւելի՛ զըւարթացար, Եւ հիմա, երբ կինը՝ պղտիկ աղջիկները

բերաւ, ինչո՞ւ երրորդ անգամ ժպտեցար և այնքան խանգամած եղար, Բաէ՛ ինծի, Միքայէլ, ինչո՞ւ քեզմէ սյապիսի լոյս մը կը ցոլայ և ինչո՞ւ երեք անգամ ժպտեցար:

Միքայէլ ըսաւ .

— Լոյս կը ցոլայ ինծմէ, որովհետեւ պատժուած էի և հիմա Աստուած ներած է ինծի, երեք անգամ ժպտեցայ, որովհետեւ ինծմէ պահանջուած էր Աստուածմէ երեք բառեր սովորիլ . հիմա այդ երեք բառերը գիտեմ, առաջին բառը սովորեցայ երբ կինդիղաց վրաս, ուստի առաջին անգամ ժպտեցայ, երկրորդ բառը սովորեցայ, երբ հարուստ մարդը ոտնամաններ ապսպրեց, ուստի, նորէն ժպտեցայ . և հիմայ, երբ պղտիկ աղջիկները տեսայ, երրորդ և վերջին բառը սովորեցայ . ուստի երրորդ անգամ Էլւալով ժպտեցայ:

— Բաէ՛ ինծիՄիքայէլ, ըսաւ Ախմոն, ինչո՞ւ Աստուած պատժեց քեզ, և ի՞նչ են այդ բառերը:

— Աստուած պատժեց զիս, որովհետեւ իրեն չի հնաղանդեցայ, երկնքի մէջ հրեշտակ մըն էի . Աստուած զրկեց զիս, որպէս զի կնոջ մը հոգին առանեմ, երկիր իջալ և տեսայ կինը՝ միայնակ ու հիւանդ, երկուորեակներ ծներ էր, երկու աղջիկներ . , կինը տեսաւ զիս, հասկցաւ, և լալով ըսաւ . «Հըրեշտակ Աստուածոյ, նոր թաղեցին ամուսինս . ծառ մը ինկաւ վրան . . . այս որբերու հոգը տանող քոյր մը կամ մայր մը չունիմ . հոգիս մի՛ առներ, թո՛ղ տուր որ զաւակներս մեծցնեմ ու ոտք հանեմ . . . »:

կնոջ խնդրանքը կատարեցի և Աստուածոյ քով վերադարձայ և ըսի . «Զէի կրնար կնոջ հոգին առնել, խեղճը նորածիններ ունէր, անոնք ինչպէ՞ս կրնայն առանց ծնողքի ապրիլ . . . »:

«Աստուած ըսաւ ինծի, — «Ետ դարձի՛ր, և մօրը

հոգին ա՛ռ. մինչև որ երեք բառեր չը սովորիս, երակինք մի՛ վերադառնար. պիտի սովորիս, թէ «ի՞նչ կայ մարդոց մէջ», «ի՞նչ տրուած չէ մարդոց» և «մարդիկ ինչո՞վ կ'ապրին . . .»:

«Երկիր իջայ և մօրը հոգին առին Նորածինները կուրծքէն ինկան, անշունչ մարմինը անկողնին մէջ գլորուեցաւ և պղտիկներէն մէկուն ոտքը գալարեց: Գիւղէն վեր բարձրացայ, ջանացի հոգին Աստուծոյ տանիլ. մեծ հով մը պատեց զիս, թեւերս ինկան և տարուեցան. Հոգին միայնակ Աստուծոյ ելաւ, իսկ ես երկիր ինկայ, ճամբուն եղերքը, մատուռին մօտ»:

ԺԱ.

Սիմոն ու Մարթա հասկցան հիմա, թէ զո՞վ կերակրած էին և ո՞վ էր իրենց հետ ապրողը. ուստի, վախէ և ուրախութենէ լացին. հրեշտակը աւելցուց.

— Մարդկային պէտքերուն անդիտակ՝ միայնակ ու մերկ կը կենացի. չէի գիտեր թէ ինչ կը նշանակէին անօթութիւն, աղքատութիւն կամ ցուրտ. Սառած ու սոված, դաշտին մէջ Աստուծոյ համար կառուցւած մատուռ մը տեսայ. խորհեցայ հոն ապաստանիլ. բայց մատուռին զուռը գոց էր. հովէն պատսպարւելու համար, մատուռին պատին տակ նստայ. իրիկունը վրայ հասաւ. անօթի էի և ցուրտէն կը սառէի. փողոցի վարի կողմէն մարդու մը գալը լսեցի. ձեռքին մէջ զոյգ մը կօշիկ ունէր և ինքնիրենը կը խօսէր. մարդ ըլլալէս ի վեր առաջին անդամն էր որ մարդկային դէմք կը տեսնէի. այս մարդուն դէմքը վիս սոսկումով լեցուց. զինքը չտեսնելու համար անդին դարձայ. լսեցի որ ան ինքնիրեն կը խօսէր. ցուրտէն պաշտպանուելու, կնոջը և զաւակներուն ապրուստը ճարելուն վրայ, Մտածեցի, որ ես ցուր-

տէն ու անօթութենէ պիտի կորսուիմ ու այս մարդը տար պահող վերաբկու մը, և իր ընտանիքին հաց ճարելու միջոցներուն վրայ կը խորհի, ան չի կրնար օգնել ինձի. Մարդը զիս տեսնելով, խոժուուցաւ և ա՛լ աւելի սոսկալի երեւոյթ մը առաւ. երբ անցաւ ու հեռացաւ, յուսահատեցայ. յանկարծ տեսայ որ ետ դարձաւ. նայեցայ, առաջուան մարդը չէր, առաջ գէմքին վրայ մահ կար, հիմա՝ կեանք... Քովս եկաւ, հազուեցուց և իր տունը տարաւ զիս: Երբ տուն հասանք, զիմացնիս ելաւ կին մը և խօսուիլ սկսաւ. կինը մարդէն աւելի՛ սոսկալի էր. ան զիս ցուրտին մէջ ձգել ուզեց եթէ այդպէս ըրած ըլլար, վատահ եմ թէ պիտի մեռնէր. ամուսինը, յանկարծ Աստուծոյ անունը յիշեց և կինը անմիջապէս փոխուեցաւ. երբ մեզի ուտելիք տուաւ և քաղցրութեամբ վրաս նայեցաւ, այն ատեն տեսայ, որ կնոջ գէմքին վրայ այլևս մահ չկար, այլ կենդանութիւն, ու իր մէջ Աստուծած տեսայ: Այն ատեն, Աստուծոյ սովորիս թէ ի՞նչ կայ մարդուն մէջ: Հասկըցայ որ մարդուն մէջ սէր կար. ուրախացայ, որովհետեւ Աստուծած արդէն սկսած էր ինձի յայտնել, ինչ որ խոստացած էր, ու առաջին անգամն ըլլան լով ժպտեցայ. Բայց տակաւին ամէն բան չէի կրնար հասկնալ. չէի գիտեր թէ՝ «Մարդոց մէջ ի՞նչ բան տրուած չէր, և թէ մարդիկ ինչո՞վ կ'ապրէին»:

«Զեզի հետ տարի մը ապրած էի երբ մարդ մը ուտանաններ ապսպրելու եկաւ՝ որոնք տարի մը առանց մաշելու պիտի հագնուէին: իրեն նայեցաւ և յանկարծ իր ետեւը ընկերո՞ մահուան հրեշտակը կեցած տեսայ. ինձմէ զատ հրեշտակը տեսնող չեղաւ. բայց ես զինքը կը ճանչնայի և գիտէի որ արեւը մարդ մտնելէն առաջ, ան հարուստ մարդուն հոգին պիտի

առնէր, Մառվի կ'ըսէի. «այս մարդը տարուան մը  
համար պատրաստութիւն կը տեսնէ և չը գիտեր որ  
իրիկուն չեղած պիտի մեռնի»։ Ասոր վրայ Աստուա-  
ծոյ երկրորդ բառը իշխեցի, «ի՞նչ տրուած չէ մար-  
դոց», Գիտնալով արդէն թէ ի՞նչ կար մարդոց մէջ,  
հիմա զիտէի նաև թէ մարդոց ի՞նչ տրուած չէր.  
մարդոց տրուած չէր զիտնալ թէ ի՞նչ բաներու  
պէտք ունէին իրենց մարմիններուն համար. Եւ եր-  
կրորդ անգամ, ժպտեցայ. Ուրախ էի որ հրեշտակ  
ընկերու տեսած էի, ուրախ էի որ Աստուած իր եր-  
կրորդ բառը ինձի յայտնած էր. Բայց այսուհանդերձ  
ամէն բան չէի կրնար հասկնալ. Զէի հասկցած թէ  
«մարդիկ ինչո՞վ կ'ապրին»։ Սպասեցի ու սպասեցի  
մինչև որ Աստուած իր երրորդ բառը ինձի յայտնեց:  
Եւ վեցերորդ տարըն պղտիկ երկուորեակ աղջիկները  
երբ եկան, ճանչցալ զանոնք և իմացայ թէ անոնք  
մահուընէ ի՞նչպէս ազատուած էին. Երբ ասոնք  
լսեցի սկսայ խորհիլ. «Մայրը մանուկներուն մասին  
զգացած սէրէն մղեալ աղաչած էր ու համակերպած  
էի»։ Խորհած էի թէ մանուկները առանց հօր կամ  
մօր չին կրնար ապրիլ. Այսուհանդերձ օտարական  
մը զանոնք գիեցուցած և մեծցուցած էր. Քիչ առաջ  
երբ կինը իրենը չեղող մանուկներուն վրայ լացաւ  
և երբ տեսայ անոնց հանդէպ ունեցած քաղցրու-  
թիւնը, իր անձին մէջ ճանչցայ կենդանի Աստուա-  
ծը և գետցայ թէ «մարդիկ ի՞նչով կ'ապրին»։ Այլ  
եւս զգացի թէ Աստուած իր վերջին բառը յայտնած  
ու ներած էր ինձ.

Ասոր վրայ երրորդ անգամ ժպտեցայ,


ԺԲ.

Հանդերձները ինկան հրեշտակին մարմինէն և  
լոյսի այնպիսի՝ պայծառութեամբ մը շրջապատուե-  
ցաւ, որ անկարելի էր անոր նայիլ. Հնչեղ ձայնով  
մը խօսեցաւ ու այնպիսի՝ տպաւորութիւն մը գոր-  
ծեց, որ իբր թէ ան վերի երկինքներէն կու գար:

Հրեշտակը ըսաւ.

— Ինքզինքին հոգ տանելով չէ որ մարդու կ'ապ-  
րի, այլ սիրով։ Մօրը կարողութենէն վեր էր գիտ-  
նալ թէ մանուկները իրենց կեանքին համար ի՞նչ  
բաներու պէտք ունէին. Ո և է մարդու տրուած չէ՛  
զիտնալ, իրենց կենդանի մարմիններուն համար կօ-  
շիկներու և կամ իրիկուան զիտիկին համար մուճակ-  
ներու պէտք ունենալնին. անձիս հոգ տանելով չէր  
որ ողջ մնացի, այլ օտարականի մը և անոր կնոջը  
սրտին մէջ սէր գտնուելով խղճացին վրաս ու սիրե-  
ցին զիս։ Որբերը իրենք իրենց վրայ խորհելով չէր  
որ ողջ մնացին, այլ որովհետեւ օտար կնոջ սրտին  
մէջ սէր կար, և նա խղճաց ու սիրեց զանոնք։ Բու-  
վանդակ մարդկութիւնը կ'ապրի ոչ թէ ինք իր վե-  
րայ հոգ ընելով, այլ մարդուն մէջ գոյութիւն ունե-  
ցող սիրով.

«Ոռաջ զիտէի որ Աստուած կեանք տուած է մար-  
դոց և կ'ուզէ որ ապրին. հրմա ուրիշ բան մը գիտ-  
ցայ։ Սովորեցայ որ Աստուած մարդոց առանձին ապ-  
րիլը չուզեր. ուստի. Նա չի յայտներ իւրաքանչիւր  
մարդու իրեն համար պէտք եղածը. Աստուած կը  
փափաքի որ մարդիկ միութեամբ ապրին. այս պատ-  
ճառով անոնց յայտնած է միայն այս բաները, որոնց  
բոլոր մարդիկ պէտք ունին և ամէնուն՝ միաս-  
նաբար։



«Մարգոց անանկ կ'երեւայ թէ իրենք իրենց վրայ  
հոգ տանելովմին է որ կ'ապրին, սովորեցայ որ իրա-  
կանութեան մէջ անոնք մի միայն ո ի ը ո վ կ'ապ-  
րին։ Ան որ սիրոյ մէջ կ'ապրի, Աստուծոյ մէջ  
կ'ապրի և Աստուած իր մէջը, որովհետեւ Աստուած  
ոէր է»։

Հրեշտակը Աստուած փառաբանեց և հիւզակը իր  
ձայնին թրթռումներէն գղրդեցաւ։

Եւ տանիքը բացուելով կրակէ սիւն մը երկրէն  
երկինք բարձրացաւ։ Սիմոն իր կնոջը և զաւակ-  
ներուն հետ գետինը ինկաւ։ Եւ հրեշտակին ուսեւ-  
րէն թեւեր բուսնելով, ան երկինքներու մէջ համ-  
բարձաւ։

Ու երբ Սիմոն իր աչքերը վեր առաւ, հիւզակը  
առաջուանին նման կանգուն գտաւ և սակայն հոն  
իրմէ, կնոջմէն և իր երկու զաւակներէն զատ ու-  
րիշ մէկը չկար։

Վ Ե Բ Զ



ՀՀ Ազգային գրադարան



NL0325175

14.167

qbl 2 b. 7.

Adresse : H. BURAT

Alexandrie (Egypte)